

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԱԼԵԿՍԻ ԲԱԲԱՅԱՆ



16.03.2020թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային բանկի «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» վարկային ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսից մինչև 2020 թվականի մարտ ամիսն ընկած ժամանակահատվածում «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից իրականացված աշխատանքների վերաբերյալ

Համաշխարհային բանկի «Առևտրի խթանում և որակի ենթակառուցվածքներ» վարկային ծրագրի շրջանակներում՝ հաշվետու ժամանակաշրջանում, «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Մշակվել է «Ջանգված և հարակից մեծությունների չափումների» և «Ջերմային չափումների» նախատեսվող լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների գնման մրցույթի փաթեթի «տեխնիկական բնութագրեր» բաղադրիչը:
2. Վերանայվել է մրցույթային փաթեթի տեխնիկական բնութագրերը որոնց հիման վրա հայտարարվել է մրցույթ «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության արդյունաբերական չափագիտության կենտրոնի տրամաչափարկման 2 լաբորատորիաների համար անհրաժեշտ սարքավորումների ձեռք բերման նպատակով: «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության երկու աշխատակիցներ ընդգրկվել են մրցույթին դիմած հայտատուների առաջարկները գնահատող հանձնաժողովում և վերջիններիս կողմից կատարվել է հայտատուների

առաջարկների վերաբերյալ համեմատության աղյուսակների մշակում, սարքավորումների չափագիտական բնութագրերի վերաբերյալ շեղումների արձանագրում, արձանագրված շեղումների մասով եզրակացությունների մշակում և առաջարկների ներկայացում գնահատող հանձնաժողովին՝ մրցույթի հայտարարման պահից մինչև հետգնահատման ողջ ժամանակաշրջանում: Մրցույթի ամփոփման արդյունքում ջերմային չափումների լաբորատորիայի սարքավորումների մասով հաղթող է ճանաչվել Իտալական Agrotec SpA կազմակերպությունը, զանգված և հարակից մեծությունների չափումների լաբորատորիայի սարքավորումների մասով ըստ էության համապատասխանող հայտերի բացակայության հիմքով հաղթող չի ճանաչվել:

3. Իրականացվել է զանգված և հարակից մեծությունների չափումների լաբորատորիայի սարքավորումների տեխնիկական բնութագրերի վերանայում, հայտի վերագնահատում և նախատեսվում է մինչև 2020թ.-ի մայիս ամիսը իրականացնել մրցույթի վերահայտարարում:
4. Մշակվել է «Չափագիտության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի արդյունաբերական չափագիտության կենտրոնի համար նախատեսված շենքի վերակառուցման նախագծում և հեղինակային հսկողության իրականացում» տեխնիկական առաջադրանքը, որի հիման վրա հայտարարվել է մրցույթ, ներկա պահին ստեղծված է հանձնաժողով և իրականացվում է մրցույթին դիմած հայտատուների հայտերի գնահատումը:
5. Իրականացվող ծրագիր բաղադրիչներում ներառված չէ մասնագետների վերապատրաստման հարցը, այս մասով «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության և Գերմանիայի PTB իստիտուտի համագործակցման արդյունքում՝ PTB-ի ֆինանսավորմամբ հաշվետու ժամանակահատվածում «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության աշխատակիցները վերապատրաստվել են արտասահմանյան ժամանակակից լաբորատորիաներում՝ նորագույն սարքավորումների շահագործման փորձ ձեռք բերելու նպատակով, մասնակցելով հետևյալ վերապատրաստման դասընթացներին՝
 - PTB training on “Temperature and balance calibration” at ZMK calibration laboratory, Germany
 - PTB training "Decision Rules and Risk Assessment”, Georgia

- 2019 International Summer School on Analytical Science, Metrology and Accreditation, France
- Workshop on small volume and mass calibration at ZMK calibration laboratory, Germany
- PTB training on "Statistical Tools for Metrology", Georgia

Աշխատակիցների վերապատրաստման գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Որակի կառավարիչ



Գևորգ Մարտոյան